



ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՖՐԵՇ» ՍՊԸ-ի Մասնակիցներին

Մենք ստուգել ենք «ՖՐԵՇ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության 2009թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման կարգը:

Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:


Աուդիտն իրականացվել է համաձայն գործող աուդիտորական ստանդարտների: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք պլանավորենք և կատարենք աուդիտն այնպես, որպեսզի հասնենք բավարար աստիճանի համոզվածության, թե՛ կան արդյոք էական անճշտություններ ֆինանսական հաշվետվություններում: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների գումարները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների տեղեկատվության բացահայտումները: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական հաշվառման վարման սկզբունքների գնահատումը, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար:

Մենք չենք հետևել Ընկերության 31.12.2009թ. դրությամբ պաշարների գույքագրման գործընթացին, քանի որ մենք ընտրվել ենք Ընկերության աուդիտոր 2010թ.

Եզրակացություն

Մեր կարծիքով, բացի վերը նշված սահմանափակման, մնացած բոլոր էական առումներով ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշմարտացիորեն են արտացոլում ընկերության ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, համաձայն ՀՀ Հաշվապահական Հաշվառման ստանդարտների:

30 հունիսի 2010թ.



«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ
մեզ օրենքն՝ որակավորված աուդիտոր

Գոռ Դավթյան